



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ (IRZ) ՈՐՊԵՍ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի և Լուսինե Սահակյանի,

քննության առնելով Պալատի նախագահի նախաձեռնությամբ պարզեցված կարգով Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամին (IRZ) որպես փաստաբանների վերապատրաստում իրականացնող կազմակերպություն հավատարմագրելու հարցը,

հաշվի առնելով փաստաբանների վերապատրաստման և Հայաստանում փաստաբանության կայացման հարցում Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամի (IRZ) հետ Պալատի ունեցած արդյունավետ համագործակցությունը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգի 2.6. կետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամին (IRZ) հավատարմագրել որպես փաստաբանների վերապատրաստում իրականացնող կազմակերպություն՝ մեկ տարի ժամկետով:

2. Սահմանել, որ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամին (IRZ) տրված հավատարմագիրն ուժի մեջ է մտնում 2016 թվականի օգոստոսի 22-ից և գործում է մինչև 2017 թվականի օգոստոսի 22-ը ներառյալ:

22 օգոստոսի 2016թ.
թիվ 18/14-Ա

3. Սահմանել, որ Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամը (IRZ) վերապատրաստման դասընթացները և դասընթացավարներին նախապես պետք է համաձայնեցնի ՀՀ փաստաբանների պալատի հետ:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

**22 օգոստոսի 2016թ.
թիվ 18/14-Ա
ք. Երևան**